

1999


“ՆՈՐ-ԴԱՐ”-Ի
ՏՕՆԸ

ՆՈՒԵՐ

“ՆՈՐ-ԴԱՐ”-Ի ԸՆԹԵՐՅԱՂԵՐԻՆ

ԿԱԶՄԵՑ

Ա. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ.



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Յ. Ի. ՎԻՔԵՐՄԱՆԻ
1894

“ՆԱՐ-ԴԱՐ”-Ի
ՏՕՆԸ

ՆՈՒՔ

«ՆԱՐ-ԴԱՐ»-Ի ՌԵԹԵՐՑԱՂՆԵՐԻՆ

1205.



ԿԱԶՄԵ
Ս. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ.

Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Յ. Ի. ԿՐԵՐԱՄԱՆ
1894

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՎԱՐ-ԵՐԱ
ԴՐՈՑ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1 марта 1894 года.

29. 367

գ 364-60

Паровая Скоропечатня Я. И. Либермана. Вознесенский просп., д. № 38-4.

Անցեալ 1893 թ. գեկտեմբերի 20-ին լրացաւ Կովկասեան Հայոց կենդրոնում — Ձմիֆլիսում հրատարակուող ամենօրեայ «Կոր-Դար» լրագրի տասնամեայ գոյութեան ըքչանը:

Այն հանգամանքը, որ «Կոր-Դար»-ը փորձութեան բովեց անցած՝ իւր արդիւնաւոր գործունէութեան երկրորդ տասնամեակի ըքչանն է մտնում, ուրախութիւն ու ինսդրութիւն պատճառեց հայրենի ուղղութեան առաջնորդ «Կոր-Դար»-ի հետեւողներին և առհասարակ ամեն մի հայի, որ ամեն բանից գերազասում է իւր ազգի և ազգային եկեղեցու շահերը:

Այդ ընդհանուր ուրախութեան, համակրութեան և բուռն զգացմունքների արտայայտիչը հանդիսացաւ ներկայ տարուայ յունուարի 30-ը:

Այդ օրը Ձմիֆլիսի հայ հասարակութիւնը, Ձմիֆլիսի ժողովանում, 'ի պատիւ «Կոր-Դար»-ի խմբագրապետ պ. Սպանդար Սպանդարեանի՝ մի հանդիսաւոր հացկերոյթ — բանկէտ տուեց: Այդ առթիւ յունուարի 30-ը կարելի է «Կոր-Դար»-ի տօնի օր անուանել: Այդ գեռ չտեսնուած հանդէսը Հայոց Մամուլի պատմութեան մէջ և' սիրտ միմիթարող և' միտք աղնուացնող նոր ըքչան է կազմում:

«Կոր-Դար»-ի այդ տօնը՝ ազգի մտաւոր զարդացման և ինքնաճանաշութեան հասնելու տօն պատք և պնդուանել: Նա հայրենի, լուսամիտ ուղղութեան տօնախմբութիւն պէտք է համարել: Այդ պիսի գրական հանդէսները, մոքին, սրտին, բարւոյն և գեղեցկին նուիրուած փառարանութիւններն, կրթիչ ներգործութիւն ունին աճող սերունդի վրայ և աղնուացնում են ժողովրդի միտքն ու սիրտը:


Ինքու սրտանց հետևող «Նոր-Դար»-ի ուղղութեան, անձամբ չեռու լովկասից, սակայն հոգւով ներկայ էի յունուարի 30-ի տօնին: Ուստի վաղօրքը գրել էի Ծափլիս իմ ընկերոջս, որ շտապէ ուղարկել ինձ յունուար 30-ի նկարագրութիւնը: Ընկերս, որքան կարողացել է անձամբ տեսածը և հաւաստի աղբիւրներից լստացած տեղեկութիւնները կարճօրէն գրել է ինձ:

Արդ, տեսնելով որ կովկասեան թերթերը շատ քիչ կամ համառօտ տեղեկութիւններ են հաղորդում յունուար 30-ին կատարուած հանդիսի մասին, իմ մէջս միտք յղացաւ կազմել այդ հանդիսի նկարագիրը և առանձին բրոշիւրով նուիրել այդ իմ կողմից «Նոր-Դար»-ի արգոյ ընթերցողներին:

Այս կատարում եմ ես ուրախութեամբ և ցանկանում եմ որ յունուար 30-ի տօնը խթան լինի ամեն կողմը ցրուած հայերի համար, տարածելու «Նոր-Դար»-ը և նրա մշտական ապահովութեան համար հոգալու:

ԱՏ. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ.

28 Փետրուար, 1894 թ.
Ա. Պատերբուրգ.



ՅՈՒՆՈՒԱՐ 30-Ի ՕՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սերկայ 1894 թուի յունուար 30-ի օրը հայ լրագրութեան պատմութեան մէջ յարգելի էջ պիտի գրաւէ այն նշանաւոր հանդիսի պատճառով որ տեղի ունեցաւ Թիֆլիսում «Նոր-Դար» ամենօրեայ լրագրի տասնամեակի լրման առիթով:

Այդ օրը Թիֆլիսի հայ հասարակութիւնը, քաղաքային ժողովարանի դաշլիճում պատրաստել էր հանդիսաւոր հայկերոյթ՝ ի պատիւ «Նոր-Դար»-ի խմբագրապետ պ. Սպանդար Սպանդարեանի:

Զնայելով որ այս մասին նախօք ոչ մի յայտարարութիւն չի եղած տեղական ոչ մի լրագրում, այսուամենայնիւ հանդիսին մասնակցողների թիւը շատ մեծ էր: Կէս օրուայ մէկ ժամին արդէն ժողովարանի ընդարձակ դաշլիճը բռնել էին քաղաքի հասարակութիւնից մօտ երկու հարիւր պատուաւոր անձինք—արք և կանայք: Այդտեղ էին նաև հանդիսին և հայկերոյթին մասնակցելու համար զանազան քաղաքներից նշանակուած կամ յատկապէս եկած պատգամաւորները՝ թէ կանայք և թէ տղամարդիկ, 'ի միջի այլոց Բագուից, Գանձակից, Նոր-Նախիջևանից, Մոզզոկից, Ալալցխայից, Իգդիրից, Մերվից և այլն: Դաշլիճի օթեակները բռնուած էին բազմաթիւ հանդիսատեսներով: Հացկերոյթի սեղանը, որ բըռնել էր դաշլիճի երեք մասը, կազմուած էր քառանկիւնի Ստաուի ձևով, որ ներկայացնում էր խմբագրապետի անուան և աղջանուան դիմատառը: Մէջ տեղը գրուած էին ուրիշ

սեղաններ, որոնց վրայ կարգով շարուած էին փառակազմ՝ ուղերձներ և շքեղ ընծաներ՝ ինչպէս Թիֆլիսի զանազան դասակարգերից, նշյալէս և ուրիշ քաղաքների հասարակութիւններից, կանանցից, երիտասարդներից, ուսուցչական խըմբերից և այլն:

Մէկ և կէս ժամին հացկերցիթի կառավարիչ և նախագահ պ. Համբ. Էնֆիաջեանը կառքով պ. Սպանդարեանի բնակարանը գնաց՝ Խմբագրապետին ճաշկերցիթի հրաւիրելու: Հասարակութիւնը սրտատրոփ օրուայ հերոսին էր սպասում: Բայց շնորհաւորելու համար հետզետէ խմբագրատուն խըմբուող այցելուները ուշացնում էին նրան: Վերջապէս նա երեաց Ռուսահայոց մամուլի նահապեա պ. Համբ. Էնֆիաջեանի հետ: Կառքը կանգնեց ժողովարանի առաջ: Ժողովարանի դռները բացուեցան և ներս մտաւ պ. Սպանդարեանը: Մուտքի և սանդուխների վրայ աջ և ձախ խռնուած բազ մութիւնը անվերջ ծափահարութիւններով և ողերուած սիրով ընդունեց նրան. «կեցցէ» Սպանդարեան, կեցցէ «նոր-Դար» բացազանըութիւնները շարունակում էին անընդհատ: Վերեից հնէց զինուորական երաժշտութիւնը և «կեցցէ-ների» ձայները կրկնապատկուեցան: Ողերութեան այդ քաղցրը ազմուիներով հասարակութիւնը իւր գործչին դաշտից առարաւ: Այստեղ ևս նոյն ծափահարութիւնը, նոյն «կեցցէ-ները» կրկնուեցան. թնդում էր այդ ձայներից դաշտից, թնդում էր Թիֆլիսի ժողովարանի ամբողջ շնըրը և հանրական շաշերի համար ազնիւ մարտնչողը զլիսի համեստ շարժուով իւր շնորհակալիքն էր յայտնում:

Վերջապէս նա առաջ անցնելով կանգնեց սեղանի վերին մասումը. աջ կողմը բռնեց պ. Համբ. Էնֆիաջեանը և ձախը՝ Շիլլերի տաղանդաւոր թարգմանիք՝ Գէորգ Բարիսուղարեանը: Պատերի երկարութեամբ և սեղանի շուրջը շարուեց հասարակութիւնը:

Երբ ծափահարութիւններն ու երաժշտութիւնը դատարեցին, սկսուեցաւ ուղերձների ընթերցումն և ընծաների մատուցումը:

Նախ կարդացուեցաւ Թիֆլիսի քահանաների կարի իմաստալեց մի ուղերձը, որ զետեղուած էր ոսկէ շրջանակի մէջ և զարդարուած նուիրապետական շքեղ և խորհրդաւոր նկարներով: Այդ ուղերձի մէջ Թիֆլիսի քահանաները մի առմի թուելով այն ծառայութիւնները, որ արել է «նոր-Դար»-ի խմբագրապետը իւր քահանամեայ հրապարակախօսական գործունէութեամբ յօգուա ազգի, եկեղեցւոյ, և մասնաւորապէս հոգեորականութեան, արտայայտում էին երախտագիտական զգացմունք դէպի անձնուելը հրապարակախօսը և օրհնելով նրան՝ յարատեսութիւն մաղթում իւր ազգաշահ գործին: Ուղերձի հետ միասին քահանաները նուիրեցին պ. Խմբագրապետին մի հարուստ արծաթակազմ աւետարան, որի վրայ յեռուած էր Քրիստոսի խաչելութեան ոսկեածոյլ պատկերը:

Ապա կարդացուեցաւ Թիֆլիսի հայ հասարակութեան ուղերձը, որ նոյնպէս զետեղուած էր շքեղ շրջանակի մէջ: Այդ ուղերձի վերին մասում նկարուած էին երկու շքաղրամներ, որոնց մէջ զեղեցիկ գասաւորութեամբ ամփոփուած էր «նոր-Դար»-ի տասնամեայ գյոււթեան պատմութիւնը: Այս գործը, որ պատկանում է պ. Միք. Սալամբէկեանի զրչին ու վրձինին, ներկայացնում է արուեստի մի կատարելատիա: Հասարակութեան ուղերձը համառօտ էր, բայց զեղեցիկ և բազմաբովանդակ. ուղերձի տակ շարուած են Թիֆլիսի պատուաւոր հասարակութեան բազմաթիւ ստորագրութիւնները:

Թիֆլիսի վարժուհիներն ու ուսուցիչները իրենց փառակազմ և ոսկետառ ուղերձի հետ՝ ներկայացրին պ. Խմբագրապետին մեծագին ոսկէ զրիչ:

Թիֆլիսի երիտասարդները՝ ներկայացրին նոյնպիսի ուղերձ և Խմբագրապետի մեծագիր պատկերը, խիստ հարուստ շրջանակի մէջ:

Թիֆլիսի կանայք՝ նոյնպիսի ուղերձի հետ՝ ներկայացրին արծաթեայ փառաւոր պատկ:

Թիֆլիսի գործակատարները՝ փառակազմ ուղերձ, դափնեայ պատկ և ոսկի զրիչ:

Նոր-Նախիջևանի հասարակութիւնը՝ արծաթեայ պսակ և փառակազմ ուղերձ:

Նոր-Նախիջևանի կանայք՝ նոյնպիսի ուղերձ և արծաթեայ պսակ:

Մոսկուայի կանայք՝ աղնիւ սպիտակ կաշուից փառակազմ ուղերձ:

Բագուի երիտասարդները և գործակատարները ներկայացրին արծաթազարդ և խիստ ճաշակով բանուած պահարանի մէջ ուղերձ, նոյնպիսի ալ'բոմ և ոսկի զրիչ:

Կարսի երիտասարդները՝ թաւշեայ ոսկեկար բարձի վրայ, գեղեցիկ ոսկի զրիչ:

Նուշու օրիորդները՝ քնարաշար Դաւիթ Մարգարէի՝ ուլունքներով ասեղնագործած՝ շքեղ և մեծադիր պատկերը:

Ալէքսանդրապոլի օրիորդները՝ հայաստանի ասեղնագործ քարտէզը, զարդարուած խորհրդաւոր շքանկարներով և զետեղած հարուստ շքանակի մէջ, պատրաստուած օրիորդ Արաքսիա Լեռնեանի ձեռքով:

Այնուշետե զանազան մասնաւոր անձինքներից ներկայացուեցան նոյնպէս զանազան ընծաներ, ոսկի զրիչներ, արծաթեայ իրեղէններ և այլն:

Պերճ Պոօշեանը իրրե Նոր-Նախիջևանի հասարակութեան պատգամաւոր ներկայացնելով այդ հասարակութեան փառակազմ ուղերձը, շնորհաւորեց և իւր կողմից՝ «Նոր-Դար»-ի տասնամեակը և յայտնեց, որ այդ առթիւ նուիրաբերում է պ. Խմբագրապետին իւր բոլոր աշխատութիւնները:

Պ. Ստ. Կանայեանը ներկայանալով «Արձագանք»-ի խրմբագրութեան կողմից՝ շնորհաւորեց «Նոր-Դարի տասնամեակը և խօսեց այդ առթիւ:

Նուէրները ներկայացնելուց և նուիրաբերների ուղերձները կարգալուց յետ՝ կարգացուեցան նաև այն շնորհաւորական թղթերը, որոնք հեռու տեղերից էին զրկուած. ինչպէս օրինակ, Ամենապատիւ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանի շնորհաւորութեան թուղթը, Շամախու առաջնորդ գեր. Մեսրովը արքեպիսկոպոս Միքատեանի օրհնութեան

զիրը. պարոնայք Ժամհարեան եղբարց Մոսկուայից զրկած կարի համակրական մի նամակը, որով նրանք խոստանում էին «Նոր-Դար»-ին իւրաքանչիւր տարի մշտական նպաստ 300-ական բուրլի: Այս նամակի ընթերցումը ընդունուեցաւ եռանդուն ծափահարութեամբ և իսկոյն էլ հանդիսի նախագահի և կարգադրի Մասնաժողովի սաորագրութեամբ շնորհակալութեան հեռագիր զրկուեցաւ պարոնայք Ժամհարեան եղբարց:

Այնուշետե ժամանակի սղութեան պատճառաւ յանուանէ յիշատակուեցան Բութօնի ուսանողական ակումբից, «Նոր-Դար»-ի բացակայ աշխատակիցներից, Շուշու, Ախալցխայի, Մոզդոկի, Գանձակի, Նուխու, Փոթիի, Պետիգօրսկի, Սևքաղաքի և այլ տեղերի հասարակութիւններից պատցած ուղերձները, նոյնպէս և բազմաթիւ մասնաւոր անձինքներից զրկուած շնորհաւորական գրութիւններն:

Երրորդ ժամին, երբ արգէն հանդէսը վերջացաւ, նախագահի հրաւեկով ամենքը իրենց տեղերը բռնեցին: Ճաշը սկսուեցաւ: Տեսարանը խորհրդաւոր էր: — Մեղանը կառավարում էր Ռուսահայոց մամալի պատկառելի նահապետ համբարձում էնֆիաջեանը, նաև, որ իւր ուսերի վրայ տարել էր «Կունիկ հայոց աշխարհին» և «Մեղու հայաստանի» հրատարակութեանց ամբողջ ծանրութիւնը, որ ներսէս ե-ի օրից եռանդուն մասնակցութիւն էր ունեցել ազգային գործերի մէջ: 70-ամեայ պատկառելի գործք մօտ նատած էր Սպանդարեանը, որ նոր հոգի ու շունչ տուաւ մեր հրապարակախօսութեանը, սաեղեց «Նոր-Դար»-ը և մի աշազին ու զօրեղգպրոց—անձնուիրաբար գործող ազգային յառաջադիմութեան համար:

Աղաբէկեանի, Նազարեանի, Նալբանդեանի օրերի գործիք կառավարում էր այն հանդէսը, որ տրւում էր երիտասարդ՝ «Նոր-Դար»-ի խմբագրապետի պատուին:

Պ. էնֆիաջեանը ուրի կանգնած անդրանիկ բաժակն առաջարկեց Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր կենացը: Հասարակութիւնը ուրի կանգնած անընդհատ ուռացով օղը

թնդացրեց և երաժշտութիւնը նուադեց ոռւսական հիմնը:
Ապա նախագահն առաջարկեց նորին Ս. Օծութեան վեհա-
փառ կաթուղիկոսի կենացն: Բաժակը դատարկուեցաւ յոտըն-
կայս, ոգեշունչ «կեցցէների» աղաղակով: Ապա խմուեցան
կովկասի պ. Կառավարչապետի և նրա օգնականի կենացները:

Այնուհետեւ նախագահը պ. Սպանդար Սպանդարեանի
կենացն առաջարկեց: Սեղանապետ-նախագահի խօսքերը ընդ-
հատուեցան ոգեորուած աղաղակներով. «կեցցէ՝ Սպանդա-
րեան», «կեցցէ՝ «նոր-Դար» բացագանչութիւնները օդը թըն-
դացրին:

«կեցցէները» շարունակւում և գղրդեցնում էին դաշ-
լիճը, նախագահի զանդակի ձայնը չէր լսւում: Բայց հէնց որ
պ. Սպանդարեանը բարձրացաւ խօսելու, խոր լուսութիւն տի-
րեց:— Ատենախօսը խօսեց պարզ և անպահոյք, առանց պա-
հանքէն, խօսեց կարծ, ամփոփ և համոզիչ եղանակաւ: Ճառի
նիւթն առաւ իւր դաւանանքը, իւր ուզզութեան էութիւ-
նը, իւր իդէալները: Բացագրեց թէ՝ ի՞նչպէս է ըմբռնում
ինքը հասարակական գործի կոչումն ու նշանակութիւնը.
Թէ ի՞նչ ծրագրով է կամենում առաջ տանել աղքի զարգաց-
ման, ինքնաճանաչութեան և ծշմարիտ յառաջադիմութեան
գործը և թէ վերջապէս ի՞նչ սնունդ է կամենում որ մատա-
կարարուի աղզին՝ նրա մատաղ հասակը կազդուրելու և նրան
երիտասարդական արբունքին ու առնական քաջառողջութեան
հասցնելու համար:

Ատենախօսի ճառի տպաւորութիւնը հրաշալի էր: Հա-
սարակութիւնը իւր հիացման զգացմունքն արտայայտեց
ոգեորուած և անվերջ կեցցէներով:

Պ. Սպանդարեանի ճառից յետ սկսուեցաւ հեռագրների
ընթերցումը: 250-ից աւելի հեռագրներ էին ստացուել ա-
մեն հայրանակ կենդրուններից և անկիւններից: Էջմիածնից՝
Սինօղի անդամներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, սարկա-
ւագներ, ճեմարանի աշակերտներ. Շամախու թեմական ա-
ռաջնորդը. Դարաբաղի թեմի առաջնորդը, Ատրպատակա-
նի թեմի առաջնորդը, Երևանի թեմի փոխանորդը, Նու-

խու, Ալէքսանդրապոլի և Կարսի յաջորդները, մամուլի ներ-
կայացուցիչներ, տեսուչներ, ուսուցչական խմբեր, հոգաբար-
ձութիւններ, քահանայական միաբանութիւններ, վաճառա-
կաններ, արհեստաւորներ, համբարների աւագներ, բանւոր-
ներ, գործակատարներ, մասնաւոր մարդիկ և այլն ելն. ա-
ճապարել էին հեռագրով իրենց ուրախութիւններն ու բա-
րեմազլթութիւնները միախառնելու, հանդիսին մասնակցող
հասարակութեան ուրախութեան և մազլթանըների հետ:

Հեռագրներից մի քանիսը միայն կարդացուեցան ամ-
բողջութեամբ, ինչպէս են՝ Սինօղի անդամների, Խորէն Տ. Վ.
Ստեփանէի, Սմբատ Շահազիլի, «Արաքս»-ի խմբագիր Սիմէօն
Գուլամիրեանցի, «Գրական և Պատմական Հանդիսի» խմբագիր
Մկրտիչ Բարխուդարեանի, «Պրիազովսկի Կրայ» թերթի խըմ-
բագրութեան, Բագուի «Մարդ. Ընկերութեան» նախագահ
Դոլուխանեանի, Բագուի հասարակութեան, Բագուի առե-
տարական դասակարգի, Նոր-Նախիջևանի կանանց, Գանձակի
կանանց, գլոբույական և աղջային զանազան հաստատութեանց
և այլն ելն հեռագրները: Խոկ բոլոր մնացեալներն միայն յա-
նուանէ յիշատակուեցան:

Հեռագրների ընթերցմանը հասարակութիւնը ձայնակ-
ցում էր ծափակարութեամբ և կեցցէներով:

Ապա նախագահը առաջարկեց թիֆլեսի հայ հասարա-
կութեան, ներկայ եղող կանանց, օտար քաղաքներից եկած
պատգամաւորների, հայ մամուլի և նրա ներկայացուցիչների
և հայ գպրոցների բարգաւաճման կենացները:

Ճաշի միջոցին ստայուեցաւ եջմիածնից ՆՈՐԻՆ ՍՈՒԻՐԻ
ՕԾՈՒԹԵԱԾՆ Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՅԱՓԱՆ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
օրհնութեան հեռագիրը: Այդ հեռագրի ընթերցումը հանդի-
սականների ոգեորութիւնը կրկնապատկեց. անվերջ, հոգե-
շունչ «կեցցէներից» դաշլիճը զղրդում էր: Պ. Սպանդա-
րեանը ոտքի կանգնելով առաջարկեց կրկին անդամ խմել Նո-
րին Սուրբ Օծութեան թանկագին կենացը՝ ասելով թէ
«Նորին Վեհափառութեան այս հայրական օրհնութիւ-
նը մեր հանդիսի գերազըն շուքն ու պսակն է կազմում և

Հետևապէս կրկնապատկում է ընդհանուր ուրախութիւնը:

Նորից հանդիսականները յոտնկայս վեհափառ հայրապետի կենացը խմեցին և «կեցցէ՝ հայրիկ» բացագանչութիւնները դահլիճը թնդացրին:

Ճաշի միջոցին վրաց դերասանական խմբի կողմից ստացուեցաւ մի ափսէ, մէջը մի բաժակ գինի, աղ և հաց, որով նրանք ըստ նախնի սովորութեան շնորհաւորում էին պ. Սպանդարեանին՝ տեղի ունեցող հանդէսը և խմում նրա կենացը: Այս առթիւ պ. Խմբազրապետը առաջարկեց խմել յիշեալ խմբի և մանաւանդ հայոց եղբայրակից ու բաղդակից վրաց ազգի կենացը, միքանի խօսքով յիշելով նրանց գարերից՝ ի վեր՝ հայ ազգի հետ ունեցած եղբայրական ու դրացիական յարաբերութիւնները և բարեմաղթելով նրանց իրենց եղբայրակից հայերի հետ համահաւասար զարգացումն և յառաջադիմութիւն:

Դրանից յետ նախագահն առաջարկեց հայ կանանց, հայ բարեգործների, հեռադրով և ուղերձով շնորհաւորողների, «Նոր-Դար»-ի աշխատակիցների, հանդիսի կարգազրիների և՝ ի լրումն ամենայնի էջմիածնի հաստատութեան և հայ հոգեբորականութեան կենացները:

Այնուհետեւ շատերը սկսան խօսել և երաժշտութիւնը աջակցում էր ընդհանուր ուրախութեանը:

՚ի վերջոց պ. Սպանդարեանը յայտնեց թէ՝ «մեր ուրախութիւնը այսօր կրկնապատկում է մանաւանդ այն պատճառով որ այսօր իսկ հայոց եկեղեցին գոհաբանական մաղթանք կատարեց նորին Մեծութեան Թաղաւոր կայսեր հիւանդութիւնից աղատուելուն համար և առաջարկեց նորին Օգոստափառ Մեծութեան երկար կեանք մաղթել:

«Ուռա՛, ուռա՛, ուռա՛», գոչեց հասարակութիւնը յոտընկայս և ոգեորուած բացագանչութիւններին ձայնակցեց երաժշտութիւնը Ռուսական հիմնով:

Հացկերցիթն սկզբից մինչև վերջը մարմնացած ոգեորութիւն էր ներկայացնում: Թէև կանխապէս տնօրինուած էր կարգադրիների կողմից որ մասնաւոր ձառեր չխօսուին և կե-

նացներ չ'առաջարկուին, այսուամենայնիւ հասարակութեան ոգեորութիւնը անկարելի եղաւ զպել: Ոգեորուած խօսեց մեր բանաստեղծ Բարխուդարեանը և թշլտուութիւն խրնդրեց այս հանդիսի առթիւ զրած իւր մի բանաստեղծութիւնը կարգալու, որը և կարդաց: Բանաստեղծութեան նիւթը «բարոյական մամուլն» էր: — «Ես այս նիւթը ընարեցի, ասաց պատկառելի բանաստեղծը, որովհետեւ «Նոր-Դար»-ը ներկայացուցիչ է բարոյականացնող մամուլի»:

Ոգեորուած խօսեց նաև «Արձագանք»-ի աշխատակից պ. Նիկ. Քարամեանը՝ «քսան տարի շարունակ համոզմունքի համար ազնիւ մարտնչողի (Սպանդարեանի) և հայ մամուլի նաշալետի (Էնֆիաջեանի)» մասին: «Թէ որքան ծանր է մեր ժամանակում համոզմունք ունենալ, ասաց նաև՝ ի միջի այլոց, և այդ համոզմունքով գործել ու կոռւել հոսանքի դէմ, այդ կարող է ըմբռնել միայն նա, ով որ ծանօթ է մեր մամուլի արգի գրութեանն ու պայմաններին, ով որ գաղտփարի համար կոռւել է մեր այլասեռուած կեանքի մժնութորդում: Այդ արել է պ. Սպանդարեանը: Քսան տարի շարունակ նա քաջաբար և հաստատուն համոզմունքով պատերազմել է գաղափարի համար. այս պատճառաւ այդ տեսակ գործիք ոչ թէ տասնամեանները՝ այլ իւրաքանչիւր տարին պէտք է տօնել: Ուրեմն ցանկանանք Սպանդարեանին յաջողութիւն, երկար կեանք, իսկ «Նոր-Դար»-ին՝ անմահութիւն»:

Այնուհետեւ խօսեցին՝ Յարոն, հայր Արսէն Բաղրատունին, Բագուի պատգամաւոր պ. Յ. Այվազեանը, պ. Մ. Սալամբէկեանը, տիկ. Ո. Տէր-Յովհաննիսեանը և ուրիշները:

Վերջում հասարակութիւնը խմեց հանդիսի նախագահ Համբարձում էնֆիաջեանի կենացը, որ գեղեցիկ կերպով կտոռավարեց հացկերոյթն:

Հանդէսը վերջացաւ: Պ. Սպանդարեանը շնորհակալութիւն յայտնելով գուրս եկաւ դահլճից թէ չէ, ոգեորուած հասարակութիւնը անվերջ կեցցէ՝ ներով բարձրացրեց նրան ձեռքերի վրայ և այնպէս յած իջեցրեց ժողովարանի սան-

դուխքներից: Ժողովարանի մուտքի առաջ և բոլոր փողոցում հաւաքուած ու խոնուած էր աշազին բազմութիւն, որ կեցցէներով ողջունում էր օրուայ հերոսին: Սպանդարեանին, իւր կամքի հակառակ, երիտասարդները ձեռքերի վրայ բռնած տարան մինչև կառքը և նստեցրին էնֆիածեանի կողքին: Անվերջ կեցցէների ուղեկցութեամբ պ. Խմբագրապետի կառքը սլացաւ դէպի իւր բնակարանը:

Սյստեղ էլ խուռն բազմութիւնը նրան ճանապարհ չէր տալիս. «Կեցցէ Սպանդարեան», կեցցէ «Նոր-Դար» բացագանցութիւններով լցուած էր մթնոլորդը: Խմբագրատան բակը և սանդուխքները լի էր բազմութեամբ, որը անընդհատ «կեցցէ» էր գոյում: Այս ինչ Սպանդարեանը խուռն և ոգեռուած ժողովրեան շերտերը մի կերպ Ճեղքելով իւր բնակարանն էր քաշուել դրսում դեռ երկար լսուած էին «կեցցէ Սպանդարեան», կեցցէ «Նոր-Դար» բացագանցութիւնները...:

Սյսպէս վերջացաւ յունուար 30-ի հանդիսաւոր հայկերոյթն, որ շատերի մաքումն անմոռանալի յիշատակ պիտի թողէ և որը ես շատ համառօտ և հասարակ կերպով նկարագրեցի, մանրամասնութիւններից զրեթէ ոչինչ չիշելով:

Զմոռանամ ասելու որ մինչև զիշերուայ ժամ 12-ը հեռագրները շարունակ ստացւում էին:

Թիֆլիս, 2 փետրուարի 1894 թ.

3. Ա.

Աւելորդ չեմ համարում ուղարկել Ձեզ նա և հետեւալ յուցակները.

ՅՈՒՆՈՒԱՐ 30-Ի ՃԱՇԿԵՐՈՅԹԻ ԽՈՐՏԿԱՑՈՒՅՑԱԿԸ

ա. Նախաձաշ	Գործելու ասուարեն
բ. Պարտիզական արդանակ	Հակառակ հոսանք.
շ. Կարկանդակներ	Խոնդրոպներ.
դ. Մայօնէլ թառափ ձկան	Բնարյա-նեան պայտար.
է. Թիկնամիս «Նապօլէոն»	Ո-ղլո-նեան յար-նանաչ.
Գ. Գետնասունկով	

գ. Որձատ և վայրի թռչուններ	Վասար-բականի Արծի-.
է. Պլոմբեր սերազանդ	Ո-րա-նո-նեան հանդէ-.
լ. Միրդ	Հալու-նի-.
թ. Թէյ և սուրճ	Դաբէշ-լ գոյծ:

ՆՈՐ-ԴԱՐ-Ի ՍՏԱՑԱԾ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ

1. Ուղերձ Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից բազմաթիւ ստորագրութեամբ. ուղերձի ճակատին երկու շքագրամ է նկարած որոնց մէջ պ. Մ. Սալամբէզեանը ճարտարակութեամբ ամփոփել է «Նոր-Դար»-ի ամբողջ պատմութիւնը: Ուղերձը դրուած է մեծ և փառաւոր շրջանակի մէջ: Կարգաց պ. Փիրումեան:

2. Թիֆլիսի քահանաներից՝ «հայ Ելեւեց-ոյ անհնո-էլ ունուցին Սալամբազեանին»: «Նոր-Դար» գեղանկար խօսքի վերելից պատկանատ խաչ է զրուած, երկու կողմը հրեշտակներ են կանգնած՝ մէկի ձեռքին ջահ, միւսի ձեռքին զրիչ Ամբողջ նկարը խաչի, զրչի և լոյսի գաղափարական միաւորութիւնն է ներկայացնում: Ուղերձի ընթերցումից առաջ, որ կատարեց արժ. Աշոտ քահ. Թեմուրազեան, արժ. Գայլուստ քահ. Տէր-Բարսեղեանը քահանաների կողմից ողջոյնի, շնորհաւորութեան և օրհնութեան խօսք խօսեց:

3. Թիֆլիսի վարժուհիներից և ուսուցիչներից ուղերձ՝ զեղեցիկ վինետկայով, դրուած շքեղ կազմի մէջ: Կարգաց պ. Մ. Դանագեօզ:

4. Թիֆլիսի կանանցից նկարէն ուղերձ ոսկի տպագրութեամբ, ամփոփած գարձեալ շքեղ կազմի մէջ, որի երեսը մոյզ կարմիր թաւշից է: Կարգաց օր. Գասպարեանց.

5. Թիֆլիսի հայ երկրաչափներից, դրուած է հաստ, ծաղկանկար թղթի վրայ. կարգաց պ. Ասլանեանց.

6. Թիֆլիսի հայ գործակատարներից՝ զարձեալ շքեղ կազմի մէջ. կարգաց պ. Աւալեան.

7. «Նոր-Դար»-ի գրաշարներից. «Նոր-Դար» թերթի փոքրիկ օրինակն, հաստ թղթի վրայ. առաջնորդողի տեղ դրուած է ուղերձը՝ ներքել ստորագրութիւններ: Կարդաց պ. Մատթէոսեան:

8. Թիֆլիսաբնակ Ախալցխացի երիտասարդներից ուղերձ գեղեցիկ, նկարէն թղթի վրայ: Կարդաց պ. Յ. Մալխասեան:

9. Բագուից՝ հայ կանանցից:

10. Բագուից՝ հայ օրիորդներից:

11. Բագուից՝ հայ երիտասարդներից՝ փառաւոր կազմի մէջ. կազմի երեսին արծաթի վրայ փորագրուած են «Նոր-Դար»-ի 1893 թ. դեկտ. 20-ի համարը, Մասիսները, Էջմիածինը և Արաքսը:

12. Նոր-Նախիջևանի կանանցից՝ կաշեայ կազմի մէջ.

13. Նոր-Նախիջևանի հասարակութիւնից՝ շքեղ կազմի մէջ, երեսին արծաթեայ պսակ, մէջը արծաթից շինւած սիրտ. ներկայացրեց և խօսեց Պերճ Պուշեննը:

14. Մոսկուայի կանանցից՝ փառաւոր կազմ՝ սպիտակ, աղնիւ կաշուից, ոսկեղծուած, պատրաստած շատ նուրբ ճաշակով:

15. Մոսկուայի հասարակութիւնից, ստացուած է ուղերձի պատճէնը. նկարը դեռ չի պատրաստուած:

16. Սղնախից՝ ոտանաւոր ուղերձ գեղեցիկ շրջանակի մէջ. Ճակատին խմբագրի լուսանկար պատկերը:

17. Շուշուց՝ համակրող տիկինների և պարոնների կողմից:

18. Ախալցխայի հասարակութեան կողմից:

19. Ալեքսանդրապոլի օրիորդների կողմից:

20. Բութոնի (Ամերիկա) հայ ուսանողական ակմբից:

21. Գանձակի ո. Լուսաւորիչ եկեղեցու դպրոցի ուսուցչական խմբից:

22. Փոթիից:

23. Պետական կիրառական խմբից:

24. Բագուի հայ գործակատարներից:

25. Նուխու հայ հասարակութիւնից:

26. Ալ-քաղաքի հայ երիտասարդներից:

27. Նոր-Բայազէդի հասարակութիւնից:

28. Գէորգ Զմէկեանից:

29. Տախտա-Բաղարի հայ պանդուխաններից:

30. Քութայիսի համակրողներից:

31. Սւանայ վանքի միաբանութիւնից:

32. Զիսար դիւղից՝ Եղեշէ քահ, Գափամաճեանից:

ՆՈՐՀԱՅԻ ԱԽԱԼՑԽԱՅԻ ՆԱՄԱԿԱՆԵՐ

1. Ամենապատիւ Մելքիսեդեկ եպիսկոպ. Մուրատեան՝ կ. Պօլսից:

2. Գերապատիւ Մեսրովը արքեպիս. Մմբատեան՝ Բագուից (առաջնորդ Շամախու թեմի):

3. Մեծապատիւ Ժամարեան եղբ. Մոսկուայից:

4. Կովկասի հայոց Բարեգործ. Ընկեր. Նուխու Տեղակ. Վարչութիւնից:

5. Խաչատուր քահ. Փանեան, Ասխաբադից:

6. Թաղէսս արքայ Առիւծեան՝ Կարմիր - Վանքից:

7. Գ. Թառումեան՝ Պետակղորսկից:

8. Ղարախանեան՝ կ. Պօլսից:

9. Մարգիս Փիլուեան՝ Նոր-Բայազէդից:

10. Ա. Ապրեսեան՝ Թաթլուից:

11. կ. Մինասեան և Ա. Տէր-Մէլքըսանեան՝ ԵլենդորՓից:

12. Կոստ. կ. Մ. Շաշնաղարեան՝ Լեարից:

13. Մ. Արեղեան՝ Ենայից (Գերմանիա):

14. Ա. Յ. Այվաղեան՝ Պօլսից:

15. Արշակ Տէր-Միքելեան՝ Էջմիածնից:

16. Յ. Շահրապեան՝ Նուխուց:

17. Մ. Քոյշախեան՝ Ախալցխայից:

18. Ա. Ա. Ազամիրեան՝ Կումբիղից:

19. Արշակունի՝ Եւլուից:

20. Յ. Մանկասարեան՝ Բագուից:
21. Ա. Քաջ. Ղաղաղեան, Ա. Յարութիւնեան, Յ. Յա-
կոբեան՝ Ախալցխայից:
22. Գ. Դիլբանչեան՝ Կուշովկայից:
23. Ա. Բախինեան՝ Ախալքալաքից:
24. Ա. Զախարբէղեան՝ Կուսապատից:
25. Յ. Բաբախանեան՝ Ղամարլուից:
26. Յ. աւ. Քաջ. Տէր-Գալստեան՝ Ախալքալաքից:
27. Գ. Թումանեան՝ Գանձակից:
28. Ա. Ղալամեան՝ Շուշուց:
29. Ա. Աբովեան, Բ. Տիտանեան՝ Ժիտոմիրից:
30. Ա. Աթանասեան՝ Երևանից:
31. Յ. Տէր-Գալստեան՝ Զանդեղուրից:
32. Վ. Տէր-Անտօնեան՝ Արդահանից:
33. Ղ. Քաջ. Տէր-Աստուածատրեան՝ Բագուից:
34. Ա. Պարզեան՝ Հին-Նախիջևանից:
35. Լ. Տէր-Նիկողայոսեան՝ Բագուից:
36. Աստուր Ռստիկեան՝ Քիչըուրդից (Ամերիկա):
37. Ա. Տէր-Աբրահամեան՝ ոտանաւոր:
38. Ա. Ա. Թումալախեան՝ Թէոդոսիայից:
39. Ա. Յ. Զալաբեան՝ Ղունիբից:
40. Յ. Սերեբրակեան՝ Անանուր գիւղի հայոց դպ. Խը-
նամակալուհեաց կողմից:
41. Հովել՝ Քութայիսից:
42. Զմրդանդ, Օրթուրուղ և Զիմադա զիւղերի հա-
մայնքի կողմից:
43. Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութ. Ցիին-
վալի տեղ. վարչութիւնից:

Է Ն Ժ Ա Ն Ե Ր

1. Թիֆլիսի քահանաներից արծաթակազմ Աւետարան՝
Երեսին խաչեալ Քրիստոս՝ ոսկեզօծ:
2. Թիֆլիսի կանանցից՝ արծաթեայ շքեղ պսակ, որի
մէջ ամփոփած է խմբազրի լուսանկար կենդանագիրը. մա-
կագրութիւնն է. «Սպանդար Սպանդար հանկար հայուն է ան-
նուել զառապէն Թիֆլիսի հայ չանայ+»:
3. Թիֆլիսի վարժուհիներից և ուսուցիչներից ոսկի
փառաւոր զրիչ «Սպանդար Սպանդարեանին Թիֆլիսի հայ
վարժուհիները և ուսուցիչները» մակագրութեամբ:
4. Թիֆլիսի հայ երիտասարդներից, Խմբազրի մեծա-
դիր պատկերը զեղեցիկ շրջանակի մէջ:
5. Թիֆլիսի հայ գործակատարներից գափնեայ պսակ՝
վրան ոսկի սիրուն զրիչ պսակի ժապաւէնի մի թեխն մա-
կագրած է ոսկի տառերով. «Նոր-Դար» լրազրի տասնամեակի
առթիւ Թիֆլիսի հայ գործակատարներից». միւս թեխն վրայ,
«Սպանդար Սպանդարեանի զրական գործունէութեան քսան-
տմեակի առթիւ Թիֆլիսի հայ գործակատարներից»:
6. Հանդիսի կարգագրիչներից խմբազրհրապարակա-
խօսի մեծադիր լուսանկար կենդանագիրը շքեղ շրջանակի մէջ:
7. «Նոր-Դար»-ի աշխատակիցներից խմբազրի և աշ-
խատակիցների խմբական մեծադիր լուսանկարը:
8. Պերճ Պոօշեանից իւր աշխատառթիւները կազմած:
9. Բագուի հայ գործակատարներից մեծ ալ'քօմ՝ խըմ-
բազրի պատկերով. ալ'քօմի երեսին արծաթի վրայ մակագրած է.
«Սպանդար Սպանդարեանին Բագուի հայ գործակատարներից»:
10. Թիֆլիսի ոսկերիչների զլիսաւոր՝ պ. Սերովեանից
արծաթեայ տուփ:
11. Ղարսի հասարակութիւնից՝ ոսկի զրիչ թաւշեայ
բարձի վրայ «Սպանդար Սպանդարեանին Ղարսից» մակա-
գրութեամբ:

12. Շուշու օրիորդներից քնարահար Գաւիթ մարզարէի ձեռագործ մեծագիր պատկերը՝ գեղեցիկ շրջանակի մէջ մակագրութիւնն է «Բազմաշխատ Սպանդար Սպանդարեանին Շուշու օրիորդներից»:

13. Շուշուց մի տիկնոջց՝ արծաթեայ բաժակ ոսկեզօծած:

14. Շուշուց պ. Կարապետ Գրիգորեանից ոսկի զրիչ:

15. Ալէքսանդրապոլի օրիորդներից հայաստանի ձեռագործ քարտէզը Խորհրդաւոր նկարներով՝ շքեղ շրջանակի մէջ, մակագրուած է. «Մեծ հրապարակախոս Սպանդար Սպանդարեանին»; Ձեռագործ քարտէզը պատրաստել է օր. Արքսիա Լեռնեանց:

16. Բագուից պ. Յակ. Մանկասարեանից ոսկի զրիչ:

17. Նոր-Նախիջևանի հայ կանանցից փառաւոր արծաթեայ պսակ. պսակի ներքեր փորագրած է. — «Նոր-Դար» 1883—1893, միւս կողմը՝ «Սպանդար Սպանդարեան 1873—1893»; այդ երկու մակագրութիւնների մէջ տեղը՝ «կեցցէ», իսկ ստորեւ՝ «Նոր-Նախիջևանի հայ կանանցից»:

18. Մի շքեղ ալ' բօմ, արծաթազարդ՝ պ. Մուրացանից:

19. Գեղեցիկ զործուածքներ մետաքսից՝ բարձեր և այլն:

20. Մի թանկապին գորգ՝ պարսկական, պ. Թ. Տէր-Միքայէլեանից:

Հ Ե Ո Ա Ւ Ի Ւ Ե Ւ

Ստացուած են 250-ից աւելի հեռաղբներ, որոնցից մի քանիսը միայն կարողացայ ուղարկել Զեղ. Մնացած հեռագրներն էլ լրագրի մէջ կկարգաբ:

Ա. ԷջՄիԱԾՆԻՑ.—«Նոր-Դար»-ի փառաւոր զործունէութեան տասնամեակը մեզ վրայ քաղցր պարտք է դնում շնորհաւորելու Զեղ՝ թերթի զեկավարիդ, և ազօթելու Աստծուն, որ երջանիկ լինիք և աջողութիւն ունենաթ շարունակելու ըստ առաջնոյն Զեր եռանգուն զործունէութիւնը ի պաշտ-

պանութիւն հայ աղքի և եկեղեցու գերագոյն շահերի: Թող մեր եկեղեցու նշանաւոր հայրերի օրհնութիւնը Զեղ, Զեր աշխատակիցների, ընթերցողների և բոլոր Զեղ յարգողների վրայ լինի: Քաջացէք Աստուծոյ օգնութեամբ, առաջ գնացէք և շարունակեցէք հայ ժողովրդի մէջ յարուցանել սուրբ զգացումներ առ աղջն և առ պաշտելի եկեղեցին: Ուր Ճշմարտութիւնն է, այնտեղ է և Աստուծած, այնտեղ է և Խաչի յաղթանակը, Խաչի, որ օգնական է բոլոր հաւատացեալներին:

Եպիսկոպոսներ՝ Աղապէտիւն:

Խոնդավորներ:

Վարդապետներ՝ Ապօնունեան:

Հաճապատապէան:

Ա. ԷջՄիԱԾՆԻՑ.—«Նոր-Դար»-ի տասնամեակի առթիւ ի սրաէ մաղթում եմ երկարակեցութիւն ազգային առաջազիմութեան և հայկական եկեղեցու սկզբունքների պաշտպանին:

Կահան Վարդապէտ (Սիսոդի անդամ).

ԷջՄիԱԾՆԻՑ վերցիշեալ Հեռագրների բովանդակութեամբ հեռագրներ են ստացուած Գեր. Տէր-Դասպարեան, Գառնակերեան, Դաւթեան սրբազններից, բարձր. Խ. ծ. գ. Ստեփանէից, Ամասունի, Տէր-Մաեփաննոսեան, Բաղդասարեան, Տէր-Մարգեան, Վարդանեան, Վարդազարեան վարդապետներից և շնորհուն. Յուսիկ, Ղեոնի, Սողոմոն, Տիղրան սարկաւագներից:

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ.—Երկար կեանք Ճշմարտութեան և լուսաւորութեան հզօր պաշտպանին. Նախագծերի և զիտաւորութիւնների իրագործումն ազնիւ մարտնչողին:

Ճիշտաբանի առնելը.

ԹԱՒԻՒԶԻՑ. — Թաւրիկի հայ հասարակութիւնը շնորհաւորելավ Սպանդարի քսանամեայ գրական գործունէութիւնը՝ ի որտէ ցանկանում է, որ նա հայ հրապարակախօսութեան մտաւոր հորիզոնի վրայ երկար փայլի:

Մո-+իսս Էպիսկոպոս.

ՄՈՍԿՈՒԾԻՑ. — Հանդիսի առթիւ քաղցր պարտականութիւն եմ համարում շնորհաւորել «Նոր-Դար»-ին և խըմբագիր Սպանդարեանին, որոնք բարոյական պարտականութեան գիտակցութեամբ և հեռու անձնական նկատումներից՝ նուիրուել են մայրենի լեզուին և հանրական շահերին: Ես սրանց միանում եմ ներկայ հանդիսին. ցանկանում եմ հայրենիքի բարոյական վերածնութեան ասպարիզում կատարեալ յաջողութիւն:

Աճեաբ Շահապել.

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ. — Սպանդարեանին շնորհաւորում եմ իւր հրապարակախօսական գործունէութեան քսանամեակի այս հանդիսաւոր օրը և «Նոր-Դար»-ի տասնամեակը: Ցանկանում եմ բարգաւաճումն «Նոր-Դար»-ի, որ եւրոպական քաղաքակրթութեան թարգման հանդիսանալով, հաւատարիմ է մընում այն սկզբունքներին, որ աւանդել է մեզ մեր պատմութիւնը:

Միշտիւ Բարիտո-բարեան

(Խմբագիր «Հանդէս գրական և պատմական»-ի):

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ. — «Նոր-Դար»-ի տասնամեակի օրը հասաւ: Ի սրտէ շնորհաւորում եմ Ձեզ, որ տասը տարուան ընթացքում վշուա, նեղշաւղով քաջամարտի տարել էք «Նոր-Դար»-ի դրօշակը: Ոչ թէ ժամանակակիցները, այլ պատմութիւնը կդնահատէ Ձեզ ըստ արժանւոյն:

Միասս Բերբերեան.

ՆՈՅՆ ԱԽԻՋԵՒԱՆԻՑ. — Ինչպէս գիշերին յաջորդում է ցերեկ, ինչպէս դաժան ձմեռից յետոյ ծաղկում է գարուն,

այնպէս էլ անցնում է հայ աղջին տիրապետող խաւարը և բացւում է լոյսը: Կարթնանան մարդիկ՝ դէպի մտաւոր վերածնութիւնը տանող առաջնորդների դրօշակը կրելու: Փշոտ է հայ գործչի ուղին. գառն է նրա ասպարէզը. սակայն քաղցր և վեհ են պտուղները: Կեցցէ անխոնջ գործիչը. կեցցէ աղնիւ խօսքի և ձշմարտութեան անվեհեր զինուորը: Օ՞ն յառաջ, իսրայել: Ողջոյն «Նոր-Դար»-ի տասնամեակին. ողջոյն փառաւոր գործչի քսանամեակի առիթով:

Երանուհի Շահէտավլան.

Նոր-Նախիջևանի հայ կանայք:

ԱԼՔԻՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ. — Ձեր հրապարակախօսութեան օգտաւէտ գործունէութեան տասնամեակի առթիւ շնորհաւում ենք Ձեր փառաւոր յաջողութիւնը. ցանկանալով առաջիկայում ևս կատարեալ յաջողութիւն Ձեր վաստակներին և ձգտումներին յօգուտ հայկաղանց լուսաւորութեան:

Կէ-շէղ վարդ. Աբանձան՝ Երևանի առաջնորդ. փոխ.

Աշու վարդ. Շահէտավլի Ալէքսանդրապոլի յաջորդ:

ԵՐԵՒԱՆԻՑ. — Բարձր գնահատելով Ձեր հրապարակախօսական անխոնջ գործունէութիւնը և Ձեր մշտական պատրաստականութիւնը՝ սեպչական շահերը հասարակական բարօրութեան օգտին վոհելու, ընկերական սեղանի շուրջը պատաժ Ձեզ համակրողներս ցանկանում ենք Ձեզ ոյժ, եռանդ, տոկունութիւն, շարունակելու սրբազն գործը Ձեր նախագծած ձանապարհով:

Մերքակ Մանդինեան (Տեսուչ Եր. Թեմ. Դպ.):

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ. — Սրտանց միանում եմ այսօրուայ հանդիսին, որ կատարւում է Ձեր բեղմնաւոր գրական գործունէութեան առթիւ: Ցանկանում եմ Ձեզ երկար կեանք և առաջիկայում ևս յաջողութիւն Ձեր գործունէութեան:

Աբանձան Մո-բաբ.

ԱԼՔԾԱՆԴՐԱՊՈՂԻՑ.—Մեր սրտին մօտ հանդիսին ներկայանալու հնարաւորութիւնը չունինալով, սրտադին շնորհաւորանքներ ենք յղում «Նոր-Դար»-ի տաղանդաւոր խմբագրին: Խորապէս զգացուած ենք. անկարող ենք հեռագրալուրով մեր հոգու ցնծութիւնն արտայայտել:

ԵՐԵՒԱՆԱՐԴՐԱ-ՌԵՆ.

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ.—Կեցցէ՛ հայ ընտանիքի սրբութեան պաշտպան անխոնջ հրապարակախօսը:

ՄԵ ՀԱՅ ընդառնիւ.

ԳԱՆՉԱԿԻՑ.—Ինչպէս երբեմն բևեռային աստղը ծովագնացներին, այնպէս էլ «Նոր-Դար»-ը մեզ՝ երիտասարդութեան համար կայ որպէս ճշմարիտ ուղեցոյց, որ տանում է դէպի ազգային ինքնագիտակցութիւն և հասունութիւն: Բնական ձանապարհը, որ նախագծել է «Նոր-Դար»-ը, բարօրութեան է առաջնորդում մեզ: Կեցցէ՛ «Նոր-Դար» ընդ ամսյամբ: Կեցցէ՛ նրա մեծատաղանդ խմբագիր Սպանդարեան:

ԲԱՊՀԱՌԵ- ԱՐԱՐԱԴՐԱ-ՌԵՆՆԵՐ.

ՇԱՄԱԽՈՒՑ.—Հայ հոգեորականութիւնն իւր հօտի հետ բաղցը պարտականութիւն է համարում իւր սրտանց շնորհաւորութիւններն յայտնել «Նոր-Դար»-ի տասնամեակի առթիւ, որ ազգին բարու, ճշմարտի և սիրոյ ձանապարհով միշտ դէպի առաջադիմութիւն է տանում:

ՍԱՐԱՐԱԴՐԱ-ՌԵՆ- ՎԱՀԱՆԱՆԵՐ:



